


ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սաւեկան	6
վեցամսեայ	6
Արտասահմանի համար	15
սաւեկան	8
վեցամսեայ	8
Ամերիկայի համար	3
սաւեկան	3
վեցամսեայ	1.50

Մանուցումն տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սաւեկան է. երեսին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կրուի:

Վառքայի համար ձեռքի 40 սաւեկան



ՄԱՍԻՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸՂԶՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՀԱՐԱՔ ՕՐԵՐԸ

Отговорникъ СТЕПАНЪ КАНАРЯНЪ

R. P. Kalémcarian Mechitharistengasse W. 4. (Autriche) Vienna

Redaction du journal "Charjoum" (Bu garie) Yarna

Պուշկարիոյ համար ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք և յեկ տրուի

ՀԱՐԱՔՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԵՆԻԿ ՎՃԱՐԷ

ԻՆՉԻ ՄԵՆՔ ԷԼ ՉՈՒՆԵՆՔ

3.

Անցեալ անգամ շեշտեցինք ինտելիգենտ և վարիչ ուժերի պակասութիւնը երկրում. այսօր ուզում ենք աւելի ծանրանալ այդ պակասութեան վրա, որովհետեւ դա մեր յեղափոխական գործի ամենափաստակար կողմերից մէկն է. Գաղութիւնը առանձին վերցրած շատ լաւ բան է և գովելի. բայց երբ քաղութեան հետ միացած է խելքը, յեղափոխական գործունէութեան զանազան մասնաւորների ըմբռնումը և այսինչ կամ այնինչ գործունէութեան օգտակար կամ վնասակար լինելը կատարու ընդունակութիւնը ու մտաւոր պատրաստութիւնը, այն ժամանակ արդէն անձնէր քաղութիւնը հրաշքներ է գործում:

Դարերով ստրկացած մեր ժողովուրդը յեղափոխութեան առաջին կայծով բորբոքվելուց ու բազմաթիւ, իր սպասածից աւելի զոհեր տալուց յետոյ անկարողը շարունակել պայքարը նոյն թափով և յեղափոխական ակտիւ գործունէութեամբ. ինչպէս անհատական ֆիզիքական պայքարների մէջ յոգնած հակառակորդը ճարպիկութիւն է ունենում հանդստանալ և ուժերը ժողովել, առաջին սխալները չը կրկնել և այնպէս յարձակվել կուրից առաջ անձանթ, իսկ այժմ ծանօթ հակառակորդի վրա, այնպէս էլ վարվում են գիտակից ժողովուրդները և նրանց յեղափոխական մարմինները. Մենք թուրքերի հետ յայտարարված մեր կուրի շրջանում, ակտիւ - բուն գործունէութեան զոհերը տալուց յետոյ փոխանակ կրկնապատկելու մեր պատրաստողական գործունէութիւնը, կամ ոչինչ չենք անում, ընկճվում ենք ձախող հարածների տակ, կամ թէ շտապում ենք կրկին փոքրիկ ուժ ստեղծել և այնպէս

թշնամու հանգէպ գուրս գալ. Եւրոպայի ուշագրութիւնը մեզ վրա հրաւիրելու անհնար տողութեամբ:

Եւրոպան չէ սիրում թոյլերին Եւրոպան չէ ոգեւորվում կատարվողներով. դա մի գառն ճշմարտութիւն է և մենք այդ ճշմարտութիւնը դեռ ոչ միայն չենք ըմբռնել, այլ ըմբռնելուց էլ շատ հեռու ենք երեւում:

Եւրոպայի շահերը մեր կատարած փոքրիկ փորձերով այնպէս չեն վտանգվում, որ նա գոնէ իր շահերի համար միջամտէր. Մենք նրան տալիս ենք մի քանի միլիոն վրաս, մինչդեռ Տաճկաստանի գոյութեան յարատեւութիւնը շուտով կը լրացնէ այդ մի քանի միլիոնը ու դեռ շատ աւելի միլիոններ կը տայ Եւրոպային. Մենք այնպիսի վնասներ պէտք է տանք Եւրոպային, այսինքն Տաճկաստանը այնպիսի գրութեան պէտք է վերածենք, որ Եւրոպան էլ յոյս չունենայ թէ Թուրքիա գոյութիւն ունենալով, այլեւս իրեն շահ պէտք է տայ:

Իսկ այդ գրութեան մենք թուրքիային կարող ենք միայն մեծ ուժով վերածել. Մեծ ուժ ասելով ի հարկէ մենք համեմատական չափով ենք վերցնում. այն ուժը որը հայը իր ներկայ յատկութիւններով ընդունակ և կարող է արտադրել Դժբախտաբար այն ուժը որ հայը կարող է տալ. մենք չենք կարողանում երեւան բերել, որովհետեւ մենք երկրում չունենք և չենք կարողանում ստեղծել մեր ըմբռնած վարիչները:

Այդ գրութիւնը ներքին էր սրանից 15, 10, հինգ ասարի առաջ. երբ մենք պարտաւոր էինք մեր ժողովուրդին ցընցել, նրան զօրով յեղափոխութեան գիրկը նետել, կռուի և արեան վարժեցնել ու հասկցնել որ ինքն էլ ընդունակ է իր հաւածողի գէմ զէնքով գուրս գալ. Իայց այսօր ներքին չէ. ժողովուրդը ցնցվեց, ու թերեւս չա-

փից էլ աւելի. Ժողովուրդը մեռնելու վարժեց, կրկին թերեւս չափից աւելի. Մեր նախկին գործերը յեղափոխական գործունական պրօպականդի կերպարանքն ունէին և ձախողվածները ներքին էր. բայց այսօր այդ ձեւ պրօպականդի շրջանը անցել է. այսօր ժողովուրդի մի պարզ զաւակ, օրինակ Անդրանիկ, մաքառումի ամենագործունական պրօպականդիստն է. և ով գիտէ այսօր քանի Անդրանիկներ կան ժողովուրդի ծոցում քաջ, յանդուգն, անձնազոհ, ճարպիկ. Եւ ահա այդ ուժերին է որ պէտք է դնել գործունէութեան նորմի քիչ համբերութիւն պահանջող պայմանները մէջ. իսկ դա կարող է անել միայն Անդրանիկների քաջութիւնը, անձնւիրութիւնը բայց մտաւորապէս լաւ պատրաստված շատ ուժեղ յեղափոխական վարիչը. Ծառնացի ամեն մի զինուոր քաջ և անձնազոհ է և մասամբ գիտակից իր պարտականութեան. բայց առանց Օյամայի, Գուրքիի, Նօջուի, Տօթոյի և այլ հրամանատարների ու սպանների, չեմ հաւատում որ պիտի կարողանային Ռուսիան այս վիճակի մէջ դնել. Բաւական է ինչ որ 5ով, 10ով 20ով, կուեցինք, այդ տեսակ կուեցինք պատասխանութեան էտապները են. կուեցինք քաջարար. անհատական, խմբային քաջութիւնները աշխարհը զարմացրեց թերեւս, բայց դրանց հետեւող զանգուածային կոտորածները այդ զարմանքը ոչնչացրին. որովհետեւ անհատները չեն սիրելի դարձնում իրենց ժողովուրդին. այլ ժողովուրդները իրենց զանգվածային բարձրագոյն յատկութիւնով են գրաւում օտարների հիացումը և գործնական ակազցութիւնը. Եւ մեր այսօրեան գործունէութեան հիմնաքարը այդ պէտք է լինի. մենք դրան և միայն դրան պէտք է ձգտենք:

Իսկ այդ ուղղութեան մէջ յաջողվելու համար հարկաւոր է մեր

մտաւոր յեղափոխական ուժերը կեդրոնացնել երկրում. Յեզափոխական գործունէութեան զեկը կեդրոնացնել երկրում. Ինչ որ գրում է գտնվում են թարկել երկրին, բայց ոչ երկրում գտնվածը են թարկել դրսում գտնվածին:

Իմ տեսակէտով, երկրի մի ուժեղ կեդրոնական կօմիտէ, որ ընդունակ է մի որոշ շրջան բուն ապստամբական գործի համար պատրաստել, աւելի կարեւորութիւն ունի, քան արտասահմանեան բոլոր կեդրոնները և բիւրօնիքը ուր մեծ մասամբ հաւաքվում են բուն յեղափոխական գործին, ժողովուրդի կացութեան, ու տրամադրութիւններին անձանթ մարդիկ:

15 տարի է որ յեղափոխութեամբ ենք զբաղվում. և մենք դեռ չենք կարողացել բուն երկրում, ոչ մի յեղափոխական կազմակերպութեան կողմից, մի ընդհանուր ժողով գումարել. Մինչդեռ այդ թէեւ դժուարին, բայց անկարելի չէր. Ծիշտ է ժողովը կարող էր ոչ այնքան բազմամարդ լինել, բայց կը լինէր կազմված գոնէ այնպիսի մարդկանցից, որոնք աւելի շատ բան կը մացնէին ժողովների մէջ, քան թէ արտասահմանում եղածները. Յեղափոխական ժողովների բազմամարդութիւնը չէ որ կարեւորութիւն ունի, այլ տարբերի որակը. երկրում կազմված ժողովը այն առաջին մեծ առաւելութիւն կունենար, որ ժողովին կը մասնակցէին միայն իրական յեղափոխական մարդիկ, կաշուից ու գլխից ձեռք քաշած մարդիկ, երկրի, ժողովուրդի պահանջներին լրջութեամբ վերաբերվող մարդիկ:

Թուրքիան այնպիսի անկուրներ ունի, ուր նոյնքան գրեթէ դիւրութեամբ ընդհանուր ժողով կարելի է գումարել որչափ անցածները Ռուսաստանում. Եւ եթէ հեռու վայրերից պատգամաւորներ չը կարողանան գալ, գոնէ նրանք ժողովի վայրում ապ-

րող զուտ յեղափոխականներին կը տան իրենց ձայնը:

Այդ տեսակ ժողովներին անգամ ներք քիչ կը լինեն, բայց ինչպէս ասացինք անձնագրո՞ւն և գործնականապէս փորձված մարդիկ կը լինեն. ժողովն էլ զգուշութեան համար կարճատեւ կը լինի. և տեղի չեն ունենալ բազմաթիւ անլի, երկար, յեղափոխական սովետութիւններով լի ճառեր. որոնք արտասահմանի ընդհանուր ժողովներին ժամանակի երկու երրորդ մասն են խըլում, ու գործնական շատ քիչ որոշումներ են տեղի ունենում:

Իսկ այնտեղ ժողով կազմակերպել կարենալու համար էլ, երկրում բազմաթիւ ինտելիգէնտ յեղափոխական վարիչներ չլիտք է ունենալ. Մենք չենք կարող երեւակայել մի ապստամբող երկիր, որ չը կարողանայ իր մէջ մի ընդհանուր ժողով գումարելու Ձեռք ցարողանում երեւակայել մի ապստամբող երկիր, որ այդ տեսակ ժողովներ յաջողցնելու և բուն յեղափոխական գործը երկրում կենդանացնելու ու արտասահմանեան համակիրներին իր հրամաններին, իր տրամադրութիւններին ենթարկելու ուժը չունենայ: Եթէ դրանք չը կան, որ անկարելի է. ուրեմն մեր ապստամբութեան գործը չէ այն ինչ որ կարծում կամ ուզում են ցոյց տալ. Եթէ կան և կարելի է որին ես հաւատում եմ, պէտք է այդ ամենը իրագործել և մի անգամ ընդ միշտ բուն երկրի գործունէութիւնը ազատել արտասահմանեան անտեղի հովանաւո-

րութիւնից և քմահաճոյքներից, մաքրելով յեղափոխական ասպարէզը զանազան յեղափոխական շաւիղէ գէնդիւստրիներից:

ՎԱՐԴՕ

ՕՏԵՍԱՅԻ ԴԵՊՔԵՐԸ

Օտէսայի խոռվութիւնները արդենք կը համարուին յեղափոխական կազմակերպութեան. Այժմ կը պարզուի որ առաջին ըմբոստ նաւազր, Օմէլչուկ, որ սպային ձեռքով սպանուած է Մոցիախտ եղած է, Գալիցիայի մէջ հրատարակուող «Կարգէր» անունով ընկերվարական թերթը կը յայտարարէ որ ան Աւստրիական նաւատորմի մէջ ամենանաւազուց քարոզիչը եղած է 1904 ի Աւստրալիան խոռվութիւններու ատեն ան եղած է իր ընկերներուն վարիչը:

Տիկ Մէդվետեա, որ Օտէսայէն փախած է Վիեննա, հետեւեալը կը պատմէ. «Արտասփիլի էր Օտէսայի վիճակը, և նկարագրել անկարելի է: ամեն բան կը վառէր և ամբողջ քաղաքը բոցերու մէջ էր: Նիքոլաեւն եկան 10,000 զործուորներ և այդ ատեն սկսաւ հրդեհումը, թալանը և կոտորածը»:

Մեքենագիտութեան Ուսանող մը որ ժընձկ կը ճամբորդէ կը պատմէ. Օտէսայէն մեկնեցայ Հինգլարթի երկրորդ ֆաղաքը ըմբոստացման մէջ էր: Թէեւ գործաթողներու անկարգութիւնները քանի մը շարժէ ի վեր որուն խնդիր էր, Մէկ գործաթողը կը վերջանար միւսը կսկսէր. Երկու շարժի օրը աւելի մեծ անկարգութիւններ տեղի ունեցան. գործաւորները հեռացան գործարաններէն և նաւահանգստի հիմնարկութիւններէն: Մարդիկ սկսան խառնակութիւններ

հանել գինեւորներու մէջ և թրամվայները կանգնեցնել փողոցները մէջ:

«Կենսագ Փօթեովին» զալուս պէս ամբողջ սկսաւ գինեւորները աւերել, ինչպէս և խանութները ու թալները Այդ օրը, չորեքշաբթի նաւագ Օմէլչուկի դիակր քարափը հանեցին. ամբողջ աւելի կատղեաւ. երկրչեան դէմ ամբողջ հրդեհեց ուս չողենաւային ընկերութեան մարտութեան շինութիւնը և յտեմարտները: Չորք օրը կաշխատէր խոռվարները գապել, արիւնայի ճակատամարտ մը տեղի ունեցաւ, որուն միջոցին հարիւրէն աւելի մարդիկ սպաննուցանուցան: Ժամը 9 ին մտերը, արիւնայի Փօթեովինի նաւաստիններուն օգնութեամբ սկսաւ խորտակել նաւահանգստին սպիրտի և դինիւ յտեմարտները:

Այդ միջոցին մէկ մասը սպիտակ կը խմէր միւսը կը վառէր:

Անթիւրթի մը մէջ, ոտի ոտէ շտեմարտները բողբոջուողով, սարձափի տեսարան մը ներկայացաւ. հարիւր ուս, որ արթուն տղերք եւ խիւր ոչ ոչ զառանք սողալու մէջ:

Հրդեհաչէջները եկան մարիսուրա տորուեստն. կրք դազուութիւնը փորձեց թաղարի մէջ մտնայ, նոր եւ սարսփեցի ընդարում մը տեղի ունեցաւ ամբողջին եւ գործերուն միջեւ:

Հրագաններու պայծառները կրքու կը յարողէին: Մարտիման իրնդանութիւնը մարդեկը ճանճերու պէս կը թափէին. անոնք կուզէին պատնէշներ շինել: Երեսն որ չորս հինգ հազար մարդ ինկած է:

Սարսփի աւելի մեծ հզաւ կրք Փօթեովինը երկու ուս մը նետեց. նաւաստիները ձերբակալելէն յետոյ որոնք կը մասնակցէին Օմէլչուկի թաղմանը: Այս հինգշաբթի օրն էր: Հազարաւոր ընկերներ սկսան փախչիլ: Մեծամասնութիւնը գէպի Եալ Ռուսանիա»:

ՌՈՒՍԱԳՆ ԼԵՆԱՍԱՆ

Յեղափոխութիւնը Լեհաստանի մէջ նոր փուլի մը մէջ մտած է այս օրերս. ըստ երեւոյթին խաղաղ ցոյցերու շրջանը գոցուած է:

Չէն ի ձեռին պայքարն է որ կը սկսի:

Արդիւնագրով Լոտզ քաղաքը, Լեհաստանի Մանչեստրը, է որ այս պատմական օրերուն մէջ, յունիսի վերջերը գրուելու կանգնած է շարժման: Ականատիս վկաներու բերնէն լսած ներս ինձ կը թոյլատրեն այդ անցքերուն մանրամասն նկարագրութիւնը զրկել ձեռքի:

Կիրակի, ամսոյ 18ին, բանուորներու ամբոյս մը իրենց մէկ ընկերով թաղումէն վերադարձած ատենին Բալիթի արուարձանին մէջ կը պաշարուին զօրքերը. հեծելազօրքը հրագէն կը պարպէ. ետքը մարզիչ սպանուին, եւ շատեր կը վիրաւորուին:

Գրեթէ անմիջապէս յետոյ, Լոտզը ընկերավարական գործաւորներու կոմիթէն վրէժխնդրական կոչ մը կը հրատարակէ ժողովրդին հինգշաբթի օրը ցոյցի հրաւիրող, որն կը վերջանար հետեւեալ խօսքերով:

«Այդ օրը քաղաքին մէջ ամեն շարժում պիտի դադրի. եւ խանութները պիտի գոցուին»:

Մենք չը պիտի աշխատինք զօրքին հետ բախում ունենալ. Բայց եթէ արդէն թափուած արեւը բաւ չէ համարուած կառավարութեան կողմէն, եթէ նորէն հրագէն պիտ պարպուի զօրքերու կողմէն ու նոր զոհեր պիտի ինան, մենք նախապէս եւ շատ որոշակի կերպով կը յայտարարենք:

Ամեն բանի համար, ինչ որ տեղի պիտի ունենայ, մենք պատասխանատու պիտի ճանչնանք ոստիկանապետ Բրգանովսկին, ինչպէս նաեւ տեղական զօրքի հրամանատարը: Եթէ հինգշաբթի մեր ընկերներէն մարդ

Ա. ԱՍՏԻՏԵԱՏՐՈՎ

ՎԻԿՏՐԻԱ ՊԱՎԼՈՎՆԱ

(Տօնախմբութիւն)

(Գրագիտի յիշողութիւններից) Անրան արկածներ բաւախան նարոխիակ հաւատարմութեան մեջ)

(Խորգով ուսերէնից)

(Շար. նախորդ թիւին)

Երբուկը իր տեղից կանգնելով պատասխանեց. — Չաւակ, այդ սարսփելի է. բայց մի յուսահատվեցէք. անկումը կարելի է շտկել. բայց յուսահատութիւնը հոգու մահն է. ձեր բոլոր ուժերով մաքրեցէք, աշխատեցէք յաղթահարել ինքզինքնիդ, բայց ձեր կորստեան մի հաւատացէք. Աստուած չէ կարող մարդին ոչնչացնել նրա համար, ինչ որ ինքն է դրել մարդու բնութեան մէջ: Միայն նիւթը երկրային կուտքի մի վերածէք, նրա արատաւորութիւնը մի գաղափարա-

կանացրէք, մտաբերեցէք որ նա թշնամի է:

Ու յանկարծ ձերուկի աչքերը մըշուով պատվեցին եւ նա հսկայից վերածվեց մի փոքրիկ զտաճած մարդիկ. զլուխը օրորելով շարունակեց.

— Ես ձեր եմ, արդէն վաթսուստարիս անցել է. իսկ ես արդեօք յաղթահարե՞լ եմ այդ բնազդը. ոչ: Երբ նա դադարում է մարմինը յաղթահարելուց, յարձակվում է մտքի վրա. պէտք է նրա հետ կուել մտքի մաքրութեան համար, մտքի կուսութիւնը պահպանելու համար, ոչ մի րոպէ թոյլ չը տալ որ յաղթանակէ. Այս, իսկ ես ձեր եմ, կարող ե՞մ գտաւոր լինել այդպիսի զօրաւոր երիտասարդուհուդ համար: Տիրապետեցէք ձեզ, ահա այն ամենը ինչ որ կարող եմ ցանկալ ձեզ համար, մի խաբեցէք ձեզ եւ սիրեցէք մարդկանց: Միտոյ համար մարդին շատ բան է ներվում:

Գնացքը կանգնեց. ձերուկը վազօնից դուրս եկաւ եւ անհետացաւ, տեսիլքի նման, ամբոյսի մէջ, որը անկնածանքով ճամբա էր բանում նրա առջև: Իսկ ես, ճամբան շարունակելով լալիս եւ մտածում էի. եթէ նա ներում է, կարելի է որ ես զեռ բոլորովին կորսված չեմ, բոլորովին յանցաւոր ու մեղաւոր չեմ:

Վիկտորիան յուզված լոցեց, ես չը խանգարեցի նրա խոկմունքը. բաւկում ինչ որ զանգակներ էին հնչում:

— Գիւղից կառք են բերել, կամացուկ ասեց Վիկտորիան. կարելի է որ Բուրուներ մեկնում է: Աստուած հետը... Երբեք չեց կը խեղճանայ կը հասկանայ որ եթէ վրիցը չը կախվեցի իրեն բարիք ցանկալուս համար էր... կարելի է որ այն ժամանակ կ'ափսոսայ և կը ներէ, բայց հիմա զոնէ դուրս չը տար ամեն բան...:

— Չեմ կարծում, առարկեցի ես, թէեւ ոչ այնքան վճռողական կերպով. նա վայրենի է. երբեմն էլ անմիտ, բայց և այնպէս կարգին մարդ է: Վիկտորիան դառնօրէն ժպտաց.

— Կարելի է. թէեւ ես քիչ եմ հաւատում այդ մարդկանց կարգին լինելուն, երբ նրանք վիրաւորված են իրենց սիրային անձնասիրութեան մէջ: Աստուած հետը. բայց այստեղ տարբեր պայմաններ են. եթէ նրա խօսելուց միայն վնասը ինձ հասնէր, թող խօսէր. եթէ ոչ որիչ բան գոնէ լուրերը եւ զրուցները արհամարելուն վաղուց սովոր եմ: Դրանից ոչ լաւ առասպելներ իմ մասին շարադրել են այստեղի տիկիները եւ դեռ շարադրում են: Ուրեմն մի վատ առասպելով աւել պէտք է լինի: Եթէ ես տարածանութիւնից վախեանայի, միթէ ինձ համար դժուար էր

վիրաւորված եւ զրպարտված անմեղութեան դերը կատարել. այսինքն ասալ չը հասկանալ ներկայացնել Բուրուների մեղադրանքները, յետոյ ուրանալ, բարկանալ ու նրան հաւատացնել որ խաբված է եւ ստիպել որ ներողութիւն խնդրէ այդ շարժաբերի համար:

Ի վնաս Աֆանասիւր միայն իմ կողմ կը բռնէր, իսկ Բուրուներ էլ Երջանիկ կը զգար հաւատալու: Չէ որ ես նրկատեցի. նա քիչ մնաց ուշադրաց լինէր երբ ես հաստատեցի, ես քեմի համար վատ դերասանուհի եմ, բայց կեանքում ամեն մի կին, այդ տեսակ ողբերգութիւնների մէջ պատարասի Դուզէ է: Այդ տեսակ օյիններն է որ մեր ժողովրդի մէջ կօշվում է կանացի դարձումը: Ես էլ ուրիշ կրկնից ոչ պակաս հմուտ եմ այդ արուեստի մէջ: Դեռք այդ մարդիկը այդպէս մեզ վարժեցրել էք ձեզնից թագնել եւ խաբել ձեզ, եւ այդ դարձել է մեր սեռական տաղանդը, երկրորդ բնաւորութիւնը: Բայց ինձ երբ այդպէս յիշուցի եւ ուղիղ բաց կուել են հրաւիրում, ես չեմ կարողանում, չեմ սիրում պոչ խաղցնել, միշտ կոչը ընդունում եմ: Ահա թէ ինչու ես գիմաւորեցի Բուրուների մեղադրանքներին, որպէս զի չը համարձակվի կարծել որ ես իրանից վախեցող եմ, չը համար-

իշխան մեծ աղբերակներն վրայ մա- հուան վճիռը պիտի գործադրենք :

Այսպէս կը վճռենք մենք եւ պիտի կատարենք :

Ամսոյս 20ին տեղի ունեցաւ հինգ զոհերու թաղումը : Ժամը չորսին բո- լոր գործարաններու մէջ աշխատանքը գաղտնեցաւ եւ գործաւորները ուղ- ղուեցան զէպի գիւղերու գտնուած տեղը : Թուով երեսուն հազար հոգի երգելով յեղափոխական երգեր, ծա- ծանելով կարմիր դրոշակներ հանգոյցեալները տարին գերեզմանա- տուն :

Քանի մը դամբանական ճառեր ար- տասանուեցան եւ ամբողջ ցրուեցաւ :

Ոտիկանական միջամտութիւն տեղի չունեցաւ : Խաղախներն անգամ ինք- զինքնին զսպեցին : Երկրորդ օրը լուր տարածուեցաւ թէ գործաւոր մը փո- ջանաւոր իրականացնողին մէջ մտեր է իր ստացած վէրքերէն : Հրահրանոց գանգոյ գործաւորները կիմանան որ հանդուցեալին զիակը դաղտնաբուր արգէն գերեզմանատուն տարուած է :

Անմիջապէս ցոյց մը որոշուի կը վրճ- ունի թափոր մը կազմել գլխաւոր, Բեթրաքովաքա փողոցին մէջ եւ ցոյց ընել քաղաքային տան զիմացը : Այդ- պէս ալ եղաւ : քաղաքային տան ճա- կատին առջեւ ամբողջ կայանեցաւ : 25 կարմիր դրոշակներ կը ծածանէին օդին մէջ : որոնցմէ 12 հրէական մա- կաքիրներ ունէին : կը ծածանի նաեւ օսկիմազ դրոշակ մը հետեւեալ խօս- քերով : «մեռելներուն համար» կեղա- նակեն կարմիր դրոշակը, բո- լոր զլուխները կը բացուին : Սա- նութները գոց են : Թափորը կանցնի անվերջ Բեթրաքովաքա փողոցէն, պատուհաններու եւ պատշգամբերու մէջ կերելին բազմաթիւ զխաբաց մարդիկ որոնք զխաբակները եւ թաչ- կիւնակները կը շարժեն եւ ամբողջի- նեւ երգելով դրոշակները կողմնեն :

կան : կառապանները ոստիկանները գլուխներն բաց անշարժ կանգնած են : Ս. Անդրէասի անկիւնը կիրեւի հեծե- լագորթի վաշտ մը : զինուորները վրճուեցան կը կանգնին եւ վերջնա- պէս կերեւին . . . հրէա եւ քրիստոն- եայ ձեռք ձեռքի կուտան եւ միասին կերգեն... այդ ամբողջ ժամանակը ես կսէի, եթէ կարելի ըլլար Բլէվէն գերեզմանէն հանել... Այս խաղաղ եւ նկայական ցոյցը կը վերջանայ կրակով եւ արիւնով : Ժամի 9 փն հրացանները կը բացուին, սուրբը պատեաններէն դուրս կելլան եւ կոտորածը կը շարունակուի մին- չեւ խոր գիւղեր, խենթացած եւ մու- թին մէջ թաղուած քաղաքին մէջ :

Երկրորդ օրը պատնէշները կը բարձ- րանան : յինուած տակառներէ արկը- ներէ եւ երեսն ի վար գարցուցած սաչ- լերէ, շրջապատուած են նաեւ երկա- թէ թելերով որոնք փրցուցած են թելեֆօնի եւ հեռագրական սիւները : Անոնք շինուած են զխաւոր փողոցը կտրող բոլոր կողմնակի փողոցներուն մէջ : Խաղախներու եւ տրակոններու ձիւրը ստոնց հանդիպելով կիյնան : Յեղափոխականները տարձանակներ կը պարպեն եւ քարեր կը նետեն աւել սիւլֆուրիկ, եւ վառող կուպր- տուներու բարձունքներէն կը թափեն յարձակողներուն զիւնը : կոխը յու- սահատական է : պատանիները, մա- նուկներն անգամ կը մասնակցին կոռուին : կը տեսնուին 13 տարեկան աղաքներ որոնք կարմիր դրոշակնե- րուն վրայ կերպուին մեռելի ազա- տութեան համար :

Ոստուկները վայրենի են : զին- ւորները ոչ միայն ցուցարարներու վրայ հրազէն կը պարպեն, այլեւ սուրբներուն պատշգամբներուն եւ պա- տուհաններուն : Պատնէշները մէկ մէկ կը գրաւուին յարձակողներուն- կողմէն : բայց երբ զօրքերը կը հե- ռանան անմիջապէս գործաւորները

պատրաստ է : նա առանց այն էլ յո- ռետես է եւ կեանքից ձանձրացած : Ծառ անգամ է սակ ինձ որ ես էլ այն թելերից մին եմ, որոնք կապու- են նրան գոյութիւն ունենալու սո- վորութեան հետ, որովհետեւ իր կեանքը նա կեանք չէ անւանում : նրա համար վախենում եմ եւ շատ էլ ամաչում... Այստեղ Վիկտորիան ձեռքով աչ- քերը ծածկեց, յետոյ նոյն պայծառ նայվածքով շարունակեց :

—Ամէնքին էլ, իմ դժբախտ Պրո- վասլան էլ ափսոսում եմ : եւ բոլոր այցելող բարեկամներին, որոնք շա- փազանց վարժվել են իմ բարեկամու- թեան եւ ինձ վրա լաւ գաղափար ու նենալուեն : Բոլորն էլ ցաւով պէտք է հրաժարվեն ինձնից : Իսկ չը բաժն- վել անկարելի է : Մէկ քանիներին հիասթափումի կատաղութիւնը կը հեռացնէ, միւսներն էլ դռնիկ ու- բարխութիւնը կուենան մտածելով— մեր անմտաշելին, մեր հպարտը, մեր պարտէզի պտուղն է եղել : եւ պարտաւորված պէտք է վանեմ : Ի- րօք ինձ գրեթէ սրբի տեղ էին ըն- դուներ : Իրենց լաւ մաքուր զգաց- մունքները խլում էին իրենց ընտա- նիքներին խորքերից եւ բերում ինձ երեւակայեցէք թէ ինչպէս յաղթա- կան պէտք է ներկայանան ինձ բաժ- բառող զանազան կիները եւ ծագրեն

կրկին դուրս կելլան իրենց թաքս- տոցներէն եւ նորէն պատնէշներ կը շինեն :

Չոհերուն թիւը անհաշուելի է : հա- զարաւոր սպաննուած եւ վիրաւոր- եալներ կը հաշուին : Գրգռուած կը շատնայ, հակառակ զօրքերու շատա- նալուեն, քաղաքի պաշարեալ վիճակի մէջ հրատարակուելուն, ընդհանուր գործաթողը եւ պայքարը կը շարու- նակուի : Անսպաս փողոցներով, դի- ակներով ու մահամերձ վիրաւորակներ րով ծանրաբեռնուած սայլեր կանցնին : Սաղախներէն եւ կանոնաւոր զօրքե- րէն ալ շատ զոհեր կան : աւելի շատ քան իշխանութիւնը կը խոտաովանի : Լուր տարածուած է սր Մուրմի գն- դին սպաները հրաժարած են հրազէն պարպել գործաթող ընդհանրուն վը- րայ : Այդ գուռը փոխուած է ուրիշ զօրքերով :

Վարչապալի մէջ ընդհանուր գոր- ծաթող յայտարարուած է : գործա- ւորները կը զոհոթեն իրենց ընկեր Օկրիցիայի դէմ տրուած մահուան վճարն զէմ : գործաւորական թաղե- րուն մէջ պատնէշներ կը բարձրանան : թափոններ կանցնին փողոցներէն, հրացաններ կը պարպուին եւ զոհեր կիյնան : Ուրիշ տեղեր ալ տեղի ու- նեցած են ծանր դէպքեր : ամեն տեղ յեղափոխութեան եւ բռնութեան մի- ջեւ տեղի կուենայ կատաղի պայ- քարը : ամեն տեղ արիւն կը հոսէ... Վերջին վայրկեանին կը տեղեկա- նամ որ Վարչապալի մէջ ուսման մը սպաներ են Գնէնցօսովայի ոստիկա- նապետը :

(Թարգ. Լը. Գ. Է) Վ.Թ.Նի

ԿԱՍԱԿԱՏԱՐԸ

—(—)—
Հ. Մ. ԱԶԱՆԻ

Մահը մտեցաւ մահճի սընարին լըռիկ եւ խստադէմ խոժոռ ու

իրենց ամուսիններին սակով :—ահա ում էիք բարձրացնում, որի առջեւ էիք երկրպագութիւններ անում, ձեր պարզութեան մէջ : Ու այդպէս եր- կար խօսելով ապագայ խառնաշփո- թութիւնների, բաժանումների մա- սին, բացատրելով որ միշտ իր բա- րեկամների համար օգտակար եւ ազ- նեացնող դեր է կատարել, նա հե- ղեկառէ յուզվում, շրթունքները դո- ղում, աչքերը փայլատակում էին : Վերջը զէմը տեղադրել եւ ծերաց- րել էր : այժմ ազատութեն կարելի էր 20 տարեկան ընդունել :

—Հանգստացէք, ասացի ես, յուզված նրա յուզումներից : գործը հաւանորէն այնքան ողբերգական չէ, որչափ դուք երեւակայում էք : Դը- րանք առաջին սուր տպաւորութիւն- ները են : Կրկնում եմ : Բուրուներ իր ամ- բողջ թեթեւամտութեամբ հանդերձ, անխիղճ մարդ չէ : մանաւանդ որ ներկայ պարագայում իր սեփական դերը այնքան խեղճ ու տգեղ է, որ եթէ նա կարենայ դատել ու ըմբռնել իր վարմունքը ձեզ վախնալու բան չի մնայ : նա պարտաւոր է լռել եւ կը լռէ :

—Աստուած տայ, առարկեց Վիկ- տորիան, կարծես ցրտից կուչ գալով : եթէ ոչ ես ուժ չեմ ունենալ այստեղ Պրովօսլայում ապրելու : Սո այդ պա-

Պուէտն դարձաւ մէջ իր խոր ցաւերին Ու ժպտեցաւ երեսին անոր :

«Ամեցիր դուն, ըսաւ մահն, կեանքն մինչ յառաւ, կուզե՞ս ճաշակել ինձմէ հիմա : Զի ես ունիմ խորագոյն բաժակն՝ Անոր՝ որ կայ ու կը մընայ :

«Չուարճու թիւն, եւ՝ տառապանք ու սէր, վայրեցիր ու երգեցիր ամեն... Համբաւդ հոն է՝ ուր կերթան մի- լիսներ :

Ուր նազելի թռչներ գեղգեղեն : «Հըզօրներն կը խայտան քո եր- գերով, Իսկ շատ կիներ քեզմով կողքան : Սակայն ես» —(ու այդ էակն ան- գորով, Երեսց զլուխը անոր վրան) :

«Սակայն ես, թեթեւ շնչով մը միակ, կը խլեմ քեզ ըլլորէն... ըսաւ ան, Ու ծանրացուց ձեռներն դժնդակ՝ Սաղաղ անխրո՞ղ անկողին վըրան...

Լոյսերը՝ նուազեցան, մարեցան... Ստուեր մը պատեց սենեակն անսո- վոր... Ու մարդը տեսաւ՝ աչքերը մահուան, Որ մըսայլը դիտէին մտեր...

Ու ըսաւ :— Կը ճանչնամ քեզ, բարեկամ, կամակատար մը, ոչի՞նչ աւելի... Թէ որ Ան է զրկեր քեզի, յայնժամ, է՛ր կ'սպասես, բաց դուռդ պան- ծալի... » Թրգ. Անգղ Մ. ՅՈՒԱԿ

ԵՆԸՆԸՉԻ ՄԵՋ ԱՊՏԻԿ ԿԱՍՊԻ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ

—(—)—
ԱՂԷՓՍԱՆԴՐԻԱ, 20 յունիս

Այն քանի մը շաբաթները որ ան- ցուցի Պօլսոյ մէջ, տարթ ունեցայ

բազայում ի՞նչ անեմ, ուր գնամ : դուք երեւակայել անգամ չէք կարող թէ իմ գործերը որչափ վատ վիճա- կում են : ես կաթարեալ աղքատ եմ : կարելի է որ Արինան միջոցներ ու- նի, բայց որչափ էլ որ մենք մօտիկ ենք իրարու, ես չէի ցտնկալ նիւ- թապէս ու եւ է կախում ունենալ նը- րանից, Աստուած ազատէ... գերի լի- նել չեմ ցանկանում : Նա լուց մի բուպի շափ, քաշելով կովմալով շարունակեց :

—Վախենում եմ որ դուք էլ չը մը- նաք այստեղ... չէք ցանկալ մնալ... Սո տասանվեցի պատասխանել : մի կողմից շատ էլ չէի ուզում գնալ, աշխատութիւնս էլ չէի վերջացրել : Պէտքերուդ էլ շատ չէր հրապու- րում : միւս կողմից էլ, շատ էլ հա- ճելի չէ իբր ազնիւ վկայ մնալ այս- պիսի մի տեղում, ուր հենց նոր մի մեծ սկանդալ տեղի ունեցաւ, ու յետոյ մարդիկ էլ ուրիշներով զբազ- վելու արամագրութիւն չեն ունե- նում, խուսափում են իրարու հան դիպելուց : եւ մտածում միայն ինչ- պէս անել որ պատահածի մասին խօսք չը փախցնեն :

(Շարունակելի)

հանդիպելու քանի մը աչքի զարնոց թուրքերու որոնք լաւ տեղեակ են պալատի մէջ խօսուածներու եւ ահա այն ինչ որ ես հետաքրքիր եւ դեռ չը հրապարակուած գտայ ձեր ընթերցողներուն համար :

Ամիսէ մը աւելի է որ Քէյօյի տարին էֆէնտին մեռած է, Ապտիւլ Համիտը, հակառակ աւանդական բոլոր սովորութիւններու դեռ պալատ չէ հրաւիրած իւսուֆ Իզէտտին էֆէնտին, զոր առաջին մահին պատճառով երկրորդ գահաժառանգը կը հանդիսանայ 1517 ին Սուլթան Սէլիմ Ա. Էն հաստատուած ժառանգական օրինաց համաձայն, Այս իշխանը, որ Ապտիւլ Ազիզին տղան է, ըստ սովորութեան իրաւունք ունէր իր հօր շինած ցօլ մասնաձգէի պալատին մէջ ապրել, բայց մինչեւ օրս այդ իրեն չէ արտօնուած :

Երեք անգամ իշխանը կորովի կերպով բողոքած է հօրեղբորը իր իրաւունքները չը ճանչցուելուն համար, սակայն ոչ մէկ պատասխան ընդունած է :

Սուլթանի բռնած վերջը իր այս երկրորդ ժառանգին հանդէպ, եթէ Րէշատ էֆէնտին մեռնի, որուն առողջութիւնը շատ խանգարուած է կըսեն, խորհել կուտայ :

Ապտիւլ Համիտը ինքզինքը հիւանդ գիտէ. մեծ երազներ չունի իր առողջական վիճակի մասին, կը հետապնդէ Իրիտէ ֆիքսին՝ ժառանգական օրէնքը փոխելու ի նպաստ իր սիրելի զաւակ Պուրհանէտտինի : Բայց որովհետեւ բացի իր զաւակ շեղօղ իշխաններէն, ինքը դեռ երեք զուակներ ունի որոնք իր սիրածէն առաջ ժառանգելու իրաւունք ունին, ան երեւակայերէ Պուրհանէտտինը իր նայ պը ընել որ թուրքերէն կը նըշանակէ աշակից, օգնական, նմօն այն պաշտօնեաներու որ Հռոմէական կայսրները կ'ստեղծէին կայսրութեան կառավարութեանը մասնակից ընելու համար :

Ապտիւլ Համիտը իր շրջապատողները համոզած է որ իր մեռած պարագային իր անն խորհրդակիցներու եւ բարձր պաշտօնեաներու շահը կը պահանջէ իշխան մը Սուլթան հռչակել, որ հօրը գծած ուղղութեամբ ընթանայ եւ զիրենք իրենց պաշտօններուն մէջ պահէ, իրենց ունեցած առանձնաշնորհումներովը միասին :

Ահա այս պայմաններու եւ իրողութիւններու մէջ, թուրքերը որոնք համբերութեամբ կ'սպասէին ներկայ ռէֆորմի վերջը, սկսած են խռովուիլ, եւ եթէ համոզուին թէ իրօք Ապտիւլ Համիտին նպատակը այս է, ինչպէս եւ իր սիրելիներունը, կրնայ որ անկարողութիւններ տեղի ունենան : Որովհետեւ ժողովուրդը համոզուած ըլլալով որ Րէշատ կամ իւսուֆ էֆէնտիններու գահակալութիւնով կրնայ ազատական նոյնիսկ սահմանադրական ռէֆորմ մը տեղի ունենալ կըսարսափի տեսնալ յարատեւութիւնը ներկայ միահեծան բռնութեան, որուն ոչնչացումը աւելի հեռուոր պագայի պիտի մնայ :

Անկասկած է որ Համիտ բռնուած է անբուժելի հիւանդութիւնով մը, ըլլալ ողնային գանսէր մը, կամ թէ քրօնիքական բորբոքում ողնածուծի, կարեւորութիւն չունի :

Այս երկու ցաւերն ալ, որոշ ժամանակէ մը վերջ զժրախտ ելք կուտենան :

Փաստը թէ իրօք այս տեսակ հիւանդութիւն մը գոյութիւն ունի, ան է որ Սուլթանի մասնաւոր բժիշկ Իպրայիմ պէյը զրկուեցաւ Պերլին կարեւոր բժիշկներու կարծիքները ստանալու ու վերադարձին անհրաժեշտ համարեց օգտատար հիւանդին ողնայարը դաղելու :

Կը խօսին նաեւ Րէշատ էֆէնտինի հիւանդութեան մասին. բայց զայն լաւ ճանչցողները կը պնդեն որ անոր հիւանդութիւնը վտանգաւոր չէ, Ան թոյլ կ'ազդուածքով եւ հիւժուած խառնուածքով մէկն է Ու եթէ այդ լուրը այդքան ետանդով կը տարածուի Երւազէն, ուր այնքան այդ խոչնդոտի վերանալու մէջ շահ ունին եւ կուզեմ խօսք մը ըսել :

Աւելի դժուար պիտի ըլլար իւսուֆի հետ այդպէս վարուիլ, որ առողջ կազմուածքով եւ չէր կրնար վրիպիլ հօրեղբոր իր հանդէպ ունեցած զգացումներուն մէջ :

Անգամ մը ան երեք տարի, մեծ զրկանքներով, աքսորուած է Չէրականի պալատին յարակից շինութիւններէն միոյն մէջ, որուն մէջ Ապտիւլ Ազիսին ամբողջ ընտանիքը նետուած էր, մինչեւ Սուրատի թագաւորութեան վերջը, Համիտի կուսակիցներուն կողմէն որոնք կը պատրաստէին Սուրատին գահընկեցութիւնը :

Իւսուֆ Իզէտտինը գիտէ ինչ դիրք բռնել եւ իր միջոցները ձեռք կառնել շուտ եւ յարմար ժամանակի հիւանդ չըլլալու համար :

(Թարգմ.) ԼԸ ԳՈՒՐ. ԷՕՐՕՊ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Մօսկուայի Չեմսթօյին ներկայացուցիչներու ժողովը հետեւեալ որոշումները տուեր է և հեռագրեր է նախարարական խորհուրդին :

— Անհրաժեշտ համարելով հանրային իշխանութեանց գործունէութեան ապահովութիւնը, որպէսզի գործադրուին Չեմսթօյին սկզբունքները. ժողովը որոշեց .

1. Անհրաժեշտ է որ Ռուսիոյ մէջ հիմնուի ազգային ներկայացուցչութիւն, սահմանադրական հիմնու վրայ, և անոնց ժողովին օրէնսդրութեան, պետական եւ լեււստից ընդունելութեան և վարչութեան ու նախարարներու վրայ հսկողութեան իրաւունք տրուի :
2. Գայտնի եղաւ որ Պուլիկինի ծրագիրը բոլորովին չի համապատասխաներ այս պահանջներուն :
3. Ազգային ներկայացուցչութեան հիմնարկումը նշանակութեան զուրկ է եթէ անոր չը պիտի մասնակցին ազգին այն ասարերը, որոնք մինչեւ օրս սիստեմաթիքաբար հեռու կը պահուէին ժողովրդային գործերէն :
4. Ատկէ կը հետևցուի որ այս կացութեան մէջ քաղաքական այդ սիստեմը այլևս շարունակուիլ չէ կարելի :
5. Հետեւաբար, առանց բարեփոխումներու իրականացման պա-

ռելու, ամենէն առաջ, որպէսզի ազգային ներկայացուցչութիւնը գործադրուի, անհրաժեշտ է որ անմիջապէս յայտարարուի բնակութիւններու և անձերու անմերձեան իրութիւնը, խօսքի և մտմուլի ազատութիւնը, հաւաքումներու իրաւունքը և քաղաքական և կրօնական պատճառներով խզուած իրաւունքներու վերահաստատումը :

Ն. Եթէ քաղաքացիական ազատութեան այս հիմնական երաշխաւորութիւնները հրովարտակով չը հաշակուին ինչպէս նաև շրջումը վարչական բռնութեան, այն ատեն ամեն մէկ համաժողով կեղծ կըլլայ, խառնակութիւնները և վարչական զեղումները պիտի շատնան :

Չեմսթօյի ներկայացուցիչները կը յայտարարեն որ իրենց այս պահանջներուն գոհացում չը տրուած պարագային ժողովուրդը ապստամբութեան չը պիտի հրաւիրեն, այլ միայն կոչ պիտի ընեն որ տուրք չը վճարէ :

— «Կենազ Բօթօժօմքին» զրահաւորին պաշտօնէութիւնը Քօնսթանդուպոլի Կոնստանտինոպոլի զրահաւորներէ եւրոպական պետութեանց ներկայացուցիչներուն հաճոյնէ լիք շրջաբերականներ, որոնք հետեւեալ պարունակութիւնը ունին .

«Կենազ Բօթօժօմքին զրահաւորը վճարողական պայքար սկսած է ռուս միապետութեան դէմ :

Այս հարցը լուծելու, պարտք կը համարենք յայտարարել, որ կերպաւորները բոլոր օտար նաւերու անձեռնմխելիութիւնը, որոնք կը շրջին Սեւ ծովին մէջ, ինչպէս նաև Սեւ ծովեան նաւահանգիստներուն :

— Բեթերոպուրկի մէջ 8000 գործաւորներ պործաթող ընելով պատերազմի դադարումը կը պահանջեն :

Կ Ո Վ Կ Ա Ս

Կողկասէն կը հազորդեն որ Երեւանեան նահանգի մէջ խաղաղութիւնը վերահաստատուելու վրայ է : Յոյսեր կան որ թալաններու մէկ զգալի մասը կառավարութիւնը պիտի կարենայ ետ գրաւել :

Երբ հայերը սկսած են, համբերութիւններ հատած, թուրքերը կոտորել ամեն տեսակ զէնքերով, ալ թուրքերը սկսած են խնդրել կոտորածի դադարումը :

ՅՐԱՆՍԱ

Յունիս 21 Բարիզէն կը հեռագրեն թէ երեսփոխանական ժողովը կէս գիշերին, քուէարկեր է եկեղեցին պետութեանէն բաժնելու օրինապիծը, որը և ընդունուեր է 341 ձայնով ընդգէմ 233 ի :

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Գերմանական կառավարութիւնը արգելած է ժօրէսին երթալ Պերլին և միջազգային մասին ճառ արտասանել :

Միջազգային Մարքի առթիւ, Գերմանիոյ և Ֆրանսիոյ միջև գոցուած կը համարուի :

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

Խաղաղութեան մասին բանակցելու համար երկու պետութեանց լիազօրները որոշուած են :

Ժամանակաւոր զինագագարի մասին պիտի բանակցին երկու թշնամի բանակներուն հրամանատարները :

Յարգելի խմբագիր .

Մեր «Ընդարձակ Կարօցական Առողջապահութիւնը» յանձնած ենք մասուլիս, պատկերների թիւը 120 ի բարձրացած է. կը խնդրենք, յարգելի բաժանորդներին, որ իրենց բաժանորդագրիները շուտով մեզ հասցնեն. Բաժանորդագրութիւնը նոյն պայմաններով շարունակուելու է մինչև զրբի լոյս տեսնելը, սակայն մինչև այդ ժամանակ իրենց բաժանորդագրիները չը վճարողները, բաժանորդ չը պիտի նկատուին եւ. եթէ սրանք գիրքը ստանալ ցանկան իսկ, պարտաւորուած կրկնապատիկ գին պէտք է վճարեն .

Փութացէ՛ք առիթից օգտուիլ, որովհետեւ բաժանորդագրելը 5 ֆրանք (2 ռուպլի, 1 տոլար) շատ աժան նըշանակուած է, համեմատած մեծ ծախքին .

ԴՈԿՏ. Կ. ՓԱՇՍԵԱՆ

ՄԵՐ ԳՈՐԾՍԿԱՆՆԵՐԸ ԵՆ

Բալխանի (Բագու).— Պ. Բժկպ. Բ. Օհանեան. Բաթում.— Տիկին Չէֆիւն Ե. Գասպարեան. Թիֆլիս.— Տիարք Ն. Ս. Թաթկեան Սըբարք (Գոլովենդի Պրոսպէկտ. Կաֆէինի մագազին). Թաւրիզ.— Պ. Դոկտոր Պ. Ասլանեան. Ամերիկայ.— Պ. Մ. Սատոյեան. 27 Պէտրոպ. Պոթօն Մաս.

Մեր հասցէն է
Տօքսո. Բաշաեան Խան
(Էփիթ) Ալէքսանարիա

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պուլկար Կիմնագիտէ շրջանաւարտ մը մատչելի գներով ալմպերաներ կը պատրաստէ պուլկար դպրոցներուն համար .

Դիմել խմբագրութեան .

